

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԼԻԲՆԵՐԻ ՏԱՐԱԽՄԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆիլիոզ. գիտությունների բեկնածու
ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Երևանում կարդացած հրապարակային դասախոսության
սղագրությունը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱԲԱԿԴՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1949

891.99(09) 15974

U-73 | Cherry Point, N.C.

Р. 4. Чернышев Збручане ии.

Uebertragung unterbrechung. In

[illegible]

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

891.99.09-1

Ա-73

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ. 4

Ֆիլոլոգ. գիտությունների բեկնաձու
Ա.Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ
ՍՈՎԵՏԱՅԱՅ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Երևանում կարդացած հրապարակային դասախոսության սղագրությունը



АС. АСАТРЯН
ОБРАЗ И. В. СТАЛИНА В
СОВЕТСКО-АРМЯНСКОЙ ПОЭЗИИ
(На армянском языке)

Издание Общества по распространению
политических и научных знаний Арм. ССР
Ереван, 1949 г.

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի առթիվ իր տված ղեկուցման մեջ՝ ամփոփելով սոցիալիզմի համաշխարհային պատմական հաղթանակները ՍՍՌՄ-ում, Մեծ Ստալինի հավատարիմ ղինակից Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովը նշում է.

«Մեր երկրում ստեղծվել է առաջներում չտեսնված՝ ժողովրդի բարոյական ու քաղաքական միասնություն: Ժողովրդի բարոյական-քաղաքական միասնությունը մեր երկրում ունի և իր կենդանի մարմնացումը: Մեզ մոտ կա մի անուն, որը դարձել է սոցիալիզմի հաղթանակի սիմվոլը: Այդ անունը միաժամանակ ժողովրդի բարոյական և քաղաքական միասնության սիմվոլն է: Դուք գիտեք, որ այդ անունն է — ՍՏԱԼԻՆ»:

Սովետական բազմազգ ժողովրդի՝ ձևով ազգային բովանդակությամբ սոցիալիստական գրականությունն ու մյուս արվեստներն իրենց գաղափարական էությունը ու նշանակությամբ Միության բոլոր ժողովուրդների «բարոյական ու քաղաքական միասնության» գեղարվեստական հայելին են, որի մեջ պայծառորեն արտացոլվում է նույն այդ ժողովուրդների հոգեկան կերպարը, նրանց անցած ուղին, նրանց ներկան ու ապագայի հեռանկարները: Հանդիսանալով սովետական «ժողովրդի բարոյական ու քաղաքական միասնության սիմվոլը», Ստալինի նվիրական անունը՝ միաժամանակ դարձել է սովետական ազգերի բազմալեզու գրականությունների և ժողովրդական բանահյուսության գաղափարական միասնության սիմվոլը, գրողների և արվեստագետների, նաև ժողովրդական երգիչների — ստեղծագործական թռիչքների ոգեշնչման անսպառ աղբյուրը:

Այդ նշանակալից փառքը՝ խորազգաց կերպով արտահայտել է մեր ժամանակաշրջանի հանճարեղ ժողովրդական երգիչ՝ Զամբուլը, սրտագին բացազանչելով՝

«Ստալին — դու ոգին մեր պոեզիայի»:

Նույն զգացումն են ապրել ու արտահայտել սովետական բո-
լոր քանաստեղծներն ու ժողովրդական երգիչները: Իրենց խոսքն
ուղղելով Ստալինին՝ հայ քանաստեղծներն էլ այդ զգացումն են
արտահայտում:

«Լի՛ են քեզնով ժողովուրդներն ու պոետները քո դարի»¹
«Քե՛զ են հրգում ժողովուրդներն իրենց անմահ երգերով,
եվ քո անունն ամեն սրտում դառնում է ուժ ու կորով»:²

գրում է մեր ժամանակի հայ անվանի քանաստեղծ Ն. Զարյանը,
որի ստեղծագործության մեջ բազմաթիվ ոգեշունչ ու հիասքանչ
էջեր կան նվիրված մեծ Առաջնորդին:

«Շքանշանի երգում» վերնագրով իր քանաստեղծության մեջ
Ն. Զարյանը խորագույն ոգևորությամբ նշում է, որ Առաջնորդը
մեր արվեստի աննախընթաց զարգացման ոգին է.

«Դեռ պետք է բարձրանա ու բարձրանա,
Մեր արվեստի ամրոցը երկնակիպ,
Ամրոցը մեծ՝ լուսավորված—անմահ
Առաջնորդի ոգով արեգնատիպ»:

ասում է նա և նշում նաև, որ Առաջնորդի կերպարն իր ստեղծա-
գործական ներշնչման հիմնական աղբյուրն է.

«Առաջնորդի պատկերն աչքիս առաջ,
Աչքս հառած անհաս գագաթներին,
Ես կտքնեմ համառ երգիս վրա...»:³

Ստալինին նվիրված քանաստեղծություններում ու պոեմնե-
րում կան սովետական պոեզիայի բոլոր կենսաթրթիռ մոտիվները,
ժողովրդի լավագույն իղձերն ու երազանքները, սովետական կյան-
քի բոլոր կողմերի անդրադարձումը՝ Հոկտեմբերյան Ռևոլուցիայի
հաղթանակից սկսած մինչև հետպատերազմյան շրջանի՝ հաղթա-

¹ Ն. Զարյան—«Դյուցազնագիրք», էջ 41:

² Ն. Զարյան—Երկեր, հ. 1-ին, էջ 119, 1945 թ.—«Ողջուն Առաջնորդին»:

³ Ն. Զարյան—Երկեր, էջ 103, 1945 թ.:

նակի ու խաղաղ շինարարութեան այս օրերը, երբ սովետական բազմազգ ժողովուրդները և ողջ առաջավոր մարդկութիւնը մեծագույն երախտագիտութեան, երջանկութեան ու հպարտութեան զգացմունքով նշում են ժողովուրդների հանճարեղ Առաջնորդի, մարդկութեան մեծ բարեկամի փառապանծ կյանքի 70-ամյակը:

Սովետահայ պոեզիայի ու ժողովրդական ստեղծագործութեան մեջ առավելապէս վերջին երկու տասնամյակում տարեց տարի ավելի ու ավելի է խորացել ու ծավալվել ժողովուրդների մեծ Առաջնորդի կյանքի ու գործունեութեան, նրա նվիրական կերպարի պատկերման ընդգրկումը՝ իբրև ճշմարտացի անդրադարձում համաշխարհային-պատմական այն մեծագույն հաղթանակների, որ նվաճել են բազմազգ սովետական ժողովուրդները բոլշևիկների պարտիայի իմաստուն քաղաքականութեան շնորհիւ՝ Ստալինի հանճարեղ ղեկավարութեամբ, որպէս անդրադարձում այն նոր աշխարհի, որ սոցիալիստական ռեուլուցիայի հաղթանակով, Լենինի և Ստալինի հանճարի լույսով բացվեց երկրագնդի մեկ-վեցերորդ մասում՝ Սովետների երկրում:

Սովետական գեղարվեստական գրականութիւնն ու մշուս արվեստները, այս նոր, սովետական սոցիալիստական աշխարհի հաղթական կառուցման մեծագույն նվաճումներից են և իրենց մեջ բնականորեն անդրադարձնում են այս նոր աշխարհի կառուցման հանճարեղ վարպետի և իմաստուն Առաջնորդի կերպարը:

Նկատելի է, որ գեղարվեստական գրականութեան ճյուղերից Ստալինի կերպարն ամենից ավելի լայն ընդգրկումով արտացոլվել է պոեզիայում ու ժողովրդի բանավոր ստեղծագործութեան մեջ:

Այն, ինչ ընդհանուր է ողջ Միութեան սովետական գրականութեան, առաջին հերթին՝ պոեզիայի համար, այն իր օրինաչափ արտահայտութիւնն ունի նաև նրա մի օրդանական հատվածի՝ սովետահայ պոեզիայի ու ժողովրդական ստեղծագործութեան մեջ:

Մեր մեծ Առաջնորդի տիտանական կերպարը պատկերելու նվիրական ձգտումով համակված՝ սովետահայ բանաստեղծներն արտահայտում են մեր ժողովրդի անսահման սերն ու նվիրվածութիւնը բոլշևիկների մեծագործ պարտիային, Սոցիալիստական Հայրենիքին: Այդ սրբազան ձգտումը մղում է նրանց դեպի ստեղծագործական նոր բարձունքներ, ստեղծելու Առաջնորդի անվան

արժանի, Սովետական Հայրենիքի հզորությունն ու գեղեցկությունը, վերածնված ժողովրդի երջանկությունն ու մարտական և աշխատանքային դյուցազնությունները պատկերող երկեր:

Առաջնորդի նվիրական անունն այն հզոր մագնիսն է, որ դեպի իրեն՝ ուրեմն և դեպի սովետական կյանքի արդիականությունն է ձգում գրողներին, նրանց համակում սացիալիստական հասարակարգի ու հայրենիքի նկատմամբ, Լենինի-Ստալինի պարտիայի ու սովետական բազմազգ ժողովրդի նկատմամբ անհուն սիրո ու նվիրվածության ոգով:

Իրենց ողջ էությունամբ համակված այդ հոյակապ խնդրին արձագանքելու խանդավառությամբ, բանաստեղծները, սակայն, զգում են նրա իրականացման դժվարությունը, հանճարեղ Առաջնորդի անվանն «արժանի երգ գրելու» դժվարությունը, զգում են Ստալինի կյանքի ու գործունեության անընդգրկելիությունն ու անսպասելիությունը:

Բանաստեղծների այդ զգացմունքը վառ արտահայտչականությամբ մարմնավորել-պատկերել է Նայիրի Զարյանն իր նշանավոր «Դյուցազնադիրք» պոեմի «Նախերգանք»-ում:

Ձեռնարկելով Ստալինի դյուցազնական կյանքի գեղարվեստական պատկերման գործին, բանաստեղծը խորապես զգում է այդ հոյակապ խնդրի անսահման մեծությունը, վիթխարիությունն ու լրջությունը և իր ստեղծագործական կարողությունը համեմատում է այն փոքրիկ թռչնիկի ուժի հետ, որը կարծեք փորձում է իր անզոր թևերով՝ կաթիլ առ կաթիլ՝ անեղր ու անհատակ օվկիանոսը տեղափոխել...:

Բերելով այդ խորիմաստ ու գեղեցիկ պատկերը, բանաստեղծն ասում է.

«Ահա կանգնած է հողմածուխի

Օվկիանի մոտ իմ հոգին,

Բանաստեղծի նրման խիզախ,

Ու սթափ նրման ճնճողուկին:

Նայում եմ ես քո վեհ կյանքին,

Քո գործերի պատմության

Եվ ինձ թվում է, թե իմ դեմ ծրփում է գոռ մի օվկիան:

Կանգնած եմ ես ծովեզերին՝ սրբառամբս դող ու կորով,

Քանի՜ կաթիլ կառնեմ, արդյոք, ես իմ երգի թևերով:

Ես ո՞նց անցնեմ կաղնիների կախարդական մի անտառ,
Ինչպե՞ս, արդյոք, ես բարձրանամ Հիմալայի նրման սար...»

Մեծ Առաջնորդի դյուցազնական կյանքի ցարիցիսյան դրվագ-
ների պատկերման մտքով խանդավառված, Բանաստեղծն ամեն
քայլափոխին խորապես զգում է, որ իր ստեղծագործական կա-
րողությունն ավելի չէ, քան փոքրիկ անզոր թռչնիկի ուժը՝ անհուն
ու անեղր օվկիանոսի հանդեպ և այդ դիտակցությամբ էլ մտորում է՝

«Հյուսել անմահ քո էպոպեն—

Դժվար է շատ,

Ուժից վե՛ր,

Պետք է ծնվի մեր Ֆիրդուսին

Կամ նոր, կախարդ մի Հոմեր:

Դժվարության հազար լեռներ դու հարթեցիր անդադար,

Կյանքդ դարձավ դյուցազնական դրվագների լեռնապար:

Քո գործերի ամեն դրվագ, ամեն կատար անսասան

Կվայելեր մի հերոսի, որպես փառքի հուշարձան»:

Բանաստեղծն այնուհետև նշում է, որ մեր «... բազմացեղ
այս աշխարհում»՝ Սոցիալիստական մեծ Հայրենիքում ամենուրեք
Առաջնորդին են երգում,

«Բայց ոչ մի երգ դեռ չի՝ հասել քո անառիկ բարձրության:

Դեռ չի սպառե՛լ...

Եվ կըսպառվի՞ արդյոք, անտակ մի օվկիանոս:

Կա՛ քո մասին շարահյուսված քեզ արժանի մի պոեմ,

Սովետական երկիրն է այդ:

Կանգնած է նա որպես վեմ,

Որպես ամրոց հողմագալար մրրիկների կենտրոնում:

Ու վարդամատ արշալույսի դրոշն է վառ ծածանում»:¹

Բանաստեղծները համեմատություններ են փնտրում, որո-
նում են արտահայտիչ միջոցներ, հղանում են գեղարվեստական

¹ Ն. Զարյան—Երկեր, էջ 11, 1945 թ.:

մետաֆորներ, ժողովուրդների մեծ Առաջնորդի մեծությունը պատկերելու համար: Բայց և ամեն քայլափոխին նրանք զգում են, որ շատ թույլ են իրենց գտած համեմատություններն ու պատկերները, որ նրանք անկարող են հասնել ժողովուրդների մեծ Առաջնորդի վեհության, բարձրության կատարները: Ղաղախական հանճարեղ ակինը՝ Ջամբուլն իր «Իմ հայրենիքը» նշանավոր պոեմում՝ դիմելով Ստալինին՝ ասում է, որ նրա մեծությունը պատկերելու համար՝

«Ձե՛ն գտնի ժիրշիները ոչ մի համեմատում,
Հանդի մեր վարպետ երգիչները ակին
Չունեն այդ խոսքերը — քարերն այդ անդին»:

Ուզեցի, ասում է Ջամբուլը՝ Ստալինին համեմատել մարգարեի, օվկիանի, բեռնային աստղի, ամենաբարձր լեռնազագաթների, լրիվ լուսնյակի, նաև արևի հետ, բայց այդ համեմատություններից ոչ մեկը չի արտահայտում Ստալինի մեծությունն ու վեհությունը, նրա հանճարեղությունն ու հարազատությունը ժողովուրդների ու ողջ մարդկության համար:

«... Ստալին, ծերունիս շունի համեմատում...» —
ասում է Ջամբուլը: —

Ապագայի սերունդները, գուցե՝ ասում է նա՝

«Կըգտնեն անվանի

Մի նոր համեմատություն — Ստալինին արժանի»:

Այդ նույն ապրումն է արտահայտում բանաստեղծ Սուրեն Վահոնին՝ իր «Անունը» վերնագրով լիրիկական բանաստեղծությանմբ, որ գրված է Ջամբուլյան մոտիվով: Հայ բանաստեղծը ևս որոնում է արտահայտիչ համեմատություններ ու փոխաբերություններ՝ Առաջնորդի մեծությունը պատկերելու համար, բայց անգոր է զգում իրեն.

«Միտք եմ անում Ջամբուլի պես, — ինչի՞ հետ քեզ համեմատեմ,
Ի՞նչ են բոլոր աստղերն անմար կամ արևի հուրը քո դեմ»:

«... Ու ես անդոր միտք եմ անում, ինչի՞ հետ քեզ համեմատեմ,
Զկա ոչինչ քեզ հավասար, ես քեզ արժան խոսք չգիտեմ»:

Բանաստեղծը՝ չգտնելով Առաջնորդի անվանն արժանի մի
խոսք, մի համեմատություն, որով քննութագրվեր — պատկերվեր
նրա մեծությունը, գրում է.

«Բայց ես գիտեմ մի հզոր բառ և երբ ես այդ բառը ասեմ,
Պիտի տեսնեն բոլորն իսկույն՝ ինչ որ ունենք լավ ու վսեմ,
Պիտի տեսնեն այդ բառի մեջ և՛ արևներ, և՛ սեր, և՛ բախտ,
Ժողովուրդներ վերածնված, նրանց սիրո դաշինքն անխախտ,
Պիտի տեսնեն ազատ մարդուն, նրա մտքի թռիչքն անհաս,
Հաղթանակներ դյուցազնական, երջանկության հազար դարբաս...
Պիտի տեսնեն աշխարհը մեր — մարդու երազն ամենաթանգ,
Եվ այն ուղին, որով հավերժ երջանկություն ու բախտ գտանք.
Այդ բառի մեջ հազար լեզու և սերունդներ որ պիտի գան,
Պիտի տեսնեն Հայրենիքիս պայծառ ներկան ու ապագան,
Ահա ես այդ բառը գիտեմ. — ամենից լավն, իմաստալին,
Իսկ դա միայն անունն է քո, և այդ անունն է Ստալին»:¹

Բանաստեղծ Գ. Բորյանը Ստալինին պատկերում է որպես ողջ
«մարդկության բախտի», նրա երջանկության ուղին ցույց տվող
հզոր Առաջնորդի.

«Ո՛վ Առաջնորդ, դու ես կերտում մարդկության բախտն այս
աշխարհում,
Հողագործն էս դու պլանտում դեպի արև, դեպի դարուն.
Տանում ես մեզ, դարձած դրոշ, դեպի չքնաղ մի լույս գալիք...
... Եվ քանի կա տիեզերքում քո անշեջ լույսն արեգական,
Ծաղկեն պիտի քո գարնան մեջ մեր լույս ներկան ու Ապագան...»:²

Ստալինի, որպես ժողովուրդների հանճարեղ Առաջնորդի, հա-
մաշխարհային մեծությունը, նրա կամքի ու հանճարի վճռական
նշանակությունը ողջ մարդկության պատմական զարգացման ըն-

¹ Ս. Վահունի — «Երգերի գիրք», էջ 5—6, 1949 թ.:

² Գ. Բորյան — «Նրկանյան լուսաբաց», էջ 12, 1947 թ.:

թացքի համար, փայլուն տաղանդով, բարձր գեղարվեստականությամբ պատկերված է Ավետիք Իսահակյանի «Մեծ Ստալինին» վերնագրով ոգեշունչ ներբողում, որ գրել է նա Առաջնորդի ծննդյան 60-ամյակի առթիվ:

Իսահակյանը Ստալինի, որպես ժողովուրդների Առաջնորդի մեծությունը պատկերում է՝ 1939 թվի վերջերի՝ համաշխարհային-քաղաքական կյանքի տագնապալից իրագրության ֆոնի վրա, երբ արդեն՝ ինչպես ասում է բանաստեղծը՝ «բռնկվել էր արյան հեղեղը կրկին» — երկրորդ համաշխարհային պատերազմը Արևմտյան Եվրոպայում:

Բանաստեղծության հոյակապ և խորիմաստ պատկերներում խտացված է Ստալինի ղեկավարած մեծ գործի հաղթական ընթացքը «հայրենիքում մեր անեղերք», որ բանաստեղծը բնութագրում է իբրև՝ «ազատության, արդարության հանգրվան», «նոր մարդկության մի նոր աշխարհ լուծընկեց»: Բանաստեղծը կարծեք կանխազգալով երկրորդ համաշխարհային պատերազմի հետագա ընթացքն ու վերջը՝ Ստալինին պատկերում է, որպես ազատատենչ մարդկության ամենակարող առաջնորդի ու հանճարեղ ղորավարի, որն իր տիտանական ուժով ու կամքով իշխում է համաշխարհային պատմական կյանքի ահեղ տարերքին՝ իր «կուռ ձեռքում պողպատի» բռնել է պատմության ընթացքի «զայրագին մրրիկների սանձը» և այդ մրրիկներին դիմադիր՝ «հաղթանակից հաղթանակ է տանում հայրենիքը մեր անեղերք»: Իսահակյանի գրած այդ ներբողը պատմական ու գաղափարական բովանդակության և բանաստեղծական ձևի միասնությամբ մի հոյակապ կերտվածք է, ծավալով թեև փոքր, բայց իր արժեքով ու գեղարվեստական կատարելությամբ մի ստեղծագործություն, որի մեջ պայծառորեն անդրադառնում է կոմունիզմի մեծ գործի, մեծ և իմաստուն Առաջնորդի տիտանական կերպարը:

Բերում ենք այդ բանաստեղծությունն ամբողջությամբ.

«Բարձրացրել ես դու պատմության սուրն ահեղ
Երկրի վրա՝ ոճիրներով ծանրաբեռ,
Ստեղծագործ խոսքդ հզոր և անշեղ
Ողջ աշխարհի սրտում կրակ է վառել:

Եւան ծովերն ու ծովերին միացան,
 Դու վարեցիր ժողովուրդներ բազմահեծ
 Ազատության, արդարության հանգրվան,
 Նոր մարդկության մի նոր աշխարհ լուծընկեց:
 Բռնկվել է արյան հեղեղը կրկին,
 Վրնջում են նժույգները երկաթի,
 Սակայն սանձը մորիկների զայրագին՝
 Դու բռնել ես քո կուռ ձեռքում պողպատի:
 Եվ տանում ես հաղթանակից հաղթանակ
 Հայրենիքը մեր անեղերք, աննկուն.
 Քեզ անսպառ կամք ու կորով, երկար կյանք
 Ո՛վ մեծ գործի մեծ Առաջնորդ իմաստուն»:¹

II

Սովետահայ պոեզիայում Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի
 առաջնորդների՝ Լենինի ու Ստալինի կերպարների պատկերման ա-
 ռաջին քայլը կատարել է սովետահայ գրականության նախակա-
 րապետը՝ բոլշևիկ բանաստեղծ Հակոբ Հակոբյանը: Առաջին ան-
 գամ նա հնչեցրեց Ստալինի նվիրական անունը հայկական պոե-
 ղիայում՝ անմահ Լենինի անվան հետ միասին, այս օրերից մոտ
 քառորդ դար առաջ՝ 1925 թ. սկզբին գրած իր նշանավոր «Վոլ-
 խովստրոյ» պոեմում:

Պրոլետարական բանաստեղծը սոցիալիզմի կառուցման հերո-
 յիկայի, երկրի սոցիալիստական ինդուստրացման ֆոնի վրա
 քարձրացնում է Ստալինի կերպարը, որպես Լենինի արժանավոր
 հաջորդի, որպես նրա մեծ գործը հավատարմորեն ու անսուսան
 ջարունակողի: Իր այդ պոեմում՝ Վոլխովստրոյի կառուցման պատ-
 կերի մեջ սիմվոլացնելով ողջ Միության սոցիալիստական էլեկ-
 տրիֆիկացումն ու ինդուստրացումը, բանաստեղծը միտում է տալ
 Լենինյան-ստալինյան հանճարեղ պլանի իրականացման մեծ
 սկզբի բանաստեղծական պատկերը՝ Սովետական Հայրենիքի հե-
 տագա զարգացման պայծառ հեռանկարով: Իսկ այդ հեռանկարը
 բանաստեղծը միահյուսում է Ստալինի՝ Լենինի հանճարեղ զինա-

¹ «Գրական թերթ» № 35, 1939 թ. 21/XII:

կցի ու արժանավոր հաջորդի վսեմ կերպարի հետ, Լենինի և Ստալինի կերպարները գծագրելով իբրև սոցիալիզմի հաղթական կառուցման համայնապարփակ սիմվոլներ: Կարևոր է հիշել «Վոլ-խովստրոյ» պոեմի գրության թվականը՝ 1925 թ. հունվար-փետրվար, երբ նոր էր լրանում սովետական ժողովուրդների ու ողջ աշխատավոր մարդկության մեծագույն կորուստի՝ Լենինի մահվան մեկ տարին, երբ շարախնդությամբ՝ «կոմունիզմի ձմեռնամուտն էր կռավում թշնամին»: Ահա, այդ օրերին՝ բոլշևիկ բանաստեղծը՝ անսասան հավատով լցված պատկերում է կոմունիզմի՝ Լենինի-Ստալինի գործի հաղթական առաջընթացը առանց Լենինի, բայց Ստալինի ղեկավարությամբ: Բանաստեղծն ասում է, որ թեև «չկա Լենինը», բայց «կան Լենինի զավակները», որ անշեղորեն իրականացնում, «մարմնացնում են նրա թողած պատգամները»: Ահա «Լենինի զավակներից» մեծագույնը՝ «Աշակերտը մեծ ուսուցչի»՝ Ստալինը, որին բանաստեղծը քնութագրում, պատկերում է իբրև «պողպատ ձեռքով ղեկակալ», կոմունիզմի նավի նավավար և արթուն պահակ:

«Հրե՛ն Ստալին... պողպատ ձեռքով երկրի ղեկը ձեռքն առած
Ղեկավարում, վարում է մեր կարմիր նավը դեպ առաջ.
Աշակերտը մեծ ուսուցչի արժանավոր է զավակ,
Արթուն պահակ մեր Միության հսկող ամեն ժամանակ»:

Պրոլետարիատի պայքարի ու հաղթանակի երգիչը դրանից մեկ տասնամյակ հետո (1936 թ.) սոցիալիստական հայրենիքի զարգացման վերընթաց ուղին պատկերում է իբրև Ստալինի տված երգման անշեղ կատարման արդյունք: Այդ մասին է խոսում Հակոբյանն իր «Կրեմլի դահլիճում» ոտանավորում, ուր պատկերված է Առաջնորդի հանդիպումը ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների հետ:

Կրեմլի դահլիճում, Ստալինի և նրա մարտական զինակիցների հանդիպման ժամանակ լսվող ցնծագին, ուրախ բացականչությունների, բուռն ու սրտագին օվաքիանների մեջ բանաստեղծն զգացել է Սովետական Հայրենիքի հաղթական առաջընթացը Լենինի նշած ճանապարհով՝ Ստալինի առաջնորդությամբ: Բանաստեղծը Ստալինին պատկերում է, որպես ռազմական մեծ հաղթանակ-

ներից նոր վերադարձած անպարտելի զորավարի, որին բանակը
սալյուտ է տալիս երկիրը ցնցող՝ հրանոթների համազարկերով:

«Իսկ նա ժպտում է, գոհ է, աներկբա
երկրի այսօրվա ծաղկած վիճակից,
Նախկին տազնապը այլևս չկա,—
Ապահով՝ երկրի սահմաններն ու գիծ:
Եվ դեմքը խրոխտ մեծն է ենինի,
Որ լույսերի մեջ բեմումն է բազմած,
Նույնպես ժպտում է նման Ստալինի
Վեց երդումն արդեն պատվով կատարած»:¹

Հակոբյանի «Վոլխովստրոյ»-ից հետո 1930-ական թվերի
սկզբին սկսվեց էենինի և Ստալինի կերպարների պատկերման ծա-
վալումը սովետահայ պոեզիայում, իբրև անմիջական արձագանք՝
Սովետական Միության մեջ սոցիալիզմի կառուցման հաղթական
ընթացքի և զարգացման այն մեծ հեռանկարների, որ բացվեցին
սովետական ժողովուրդների առաջ ստալինյան հնգամյակների ի-
րականացումով:

Էենինի ու Ստալինի կերպարների պատկերման լայն ծավալու-
մը նույն այդ տարիներին է սկսվում նաև մեր Միության մյուս ժո-
ղովուրդների պոեզիայում: Եվ ուրեմն մեր պոեզիայի թեմատիկ
գաղափարական զարգացումը և ուղղութիւնը համընթաց է եղել
ողջ Միության սովետական պոեզիային: Երկրի ինդուստրացման
ու համատարած կոլեկտիվացման ստալինյան հանձարեղ նախա-
գծումների իրականացման գեղարվեստական արտացոլումը մաս-
նավորապես պոեզիայում ուժգնորեն արտահայտվեց էենինի ար-
ժանավոր հաջորդի՝ մեծ Ստալինի նվիրական կերպարի ծավալուն
պատկերումով:

III

«Սովետական Միության ժողովուրդները բազմաթիվ լեզուներ-
քով երգեր են հյուսում Ստալինի մասին: Այդ երգերի մեջ արտա-

¹ Հ. Հակոբյան — Ընտիր երկեր. էջ 77—78, 1936 թ.:

ցոլված է Սովետական Միության ժողովուրդների մեծագույն սերը և անսահման նվիրվածությունն իրենց Առաջնորդին, ուսուցչին, բարեկամին և զորավարին:

Ստալինի անունը ժողովրդական ստեղծագործության մեջ միաձուլվում է Լենինի անվան հետ: «Մենք ընթանում ենք Ստալինի հետ այնպես, ինչպես Լենինի հետ, խոսում ենք Ստալինի հետ այնպես, ինչպես Լենինի հետ, նա գիտե մեր բոլոր մտքերն ու խոհերը, իր ամբողջ կյանքի ընթացքում նա մեր մասին է հոգում»¹ — ասվում է ուսական ժողովրդական հիանալի ասմունքներից մեկում: «Ստալինի անվանը՝ նրա բոլոր գործերում նախորդում է Լենինի անունը, ինչպես որ Լենինի անվանը՝ լեռնային արձագանքի նման անդրադառնում է դարերում՝ Ստալինի անունը», — գրում է ժամանակակից ռուս անվանի գրող Լեոնիդ Լեոնովը:

Ճիշտ այդպես է նաև սովետահայ պոեզիայում, ինչպես և մեր գուսանների ու ժողովրդական երգիչների ստեղծագործության մեջ, ուր բազմաթիվ գեղեցիկ էջեր կան, որոնցում արտահայտված է այն գաղափարը, որ Ստալինը — Լենինն է այսօր:

Ն. Զարյանն իր «Դյուցազնագիրք» պոեմի «Վերջերգ»-ում թեև շատ հակիրճ, բայց ցայտուն շտրիխներով պատկերում է քաղաքացիական պատերազմներին հաջորդած տարիներին՝ Ստալինի գործունեությունը Լենինի հետ միասին, իբրև «նրբան հզոր զինակից», «նրբան ձուլված հավիտյան», ամրացնելով նորահաստատ «բանվորական պետությունը», երբ՝

«Շառագունեց հորիզոնում մի նոր կյանքի արշալույս,
... Հաղթանակի հուրհեր մանուկն իր օրոցքից ելավ դուրս,
Կանգնեց ամուր ոտքի վրրա,
Կապեց գոտին,
Առավ գուրդ,

Նրբա թովչանքն ու զորությունն արար աշխարհ ճանաչեց,

Նրբա պայծառ հայացքի տակ մի նոր աշխարհ կանաչեց...»:

«Վերջերգ»-ում մեծ ուժով պատկերված է Լենինի մահն, իբրև սովետական ժողովուրդների ու ողջ աշխատավոր մարդկության մեծագույն ու ծանրագույն կորուստ, այդ ժամանակ թշնամի բանակի,

¹ «Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին. Համառոտ կենսագրություն» 1947 թ. էջ 250:

կապիտալի աշխարհի շարանենգ սպասումները՝ «կոմունիզմի ձմեռնամուտի» նկատմամբ, և այդ իրադրության մեջ Ստալինի պատմական երդումն ու նրա անշեղ ու հաղթական կատարումը:

Այդ գաղափարն է մարմնավորում նաև Գ. Սարյանի՝ «Խոսք Լենինի հիշատակին» բանաստեղծությունը: Նա պատկերում է Սոցիալիստական Հայրենիքի անցած ուղին՝ Լենինի մահից հետո Ստալինի առաջնորդությամբ, այն փառապանծ ուղին, որ լուսավորված է Լենինի գործի հանճարեղ շարունակողի պատմական երդման լույսով: Ուսանավորի երկտող ռեֆրենով (կրկներգ) բանաստեղծն ասում է, որ հանձին Ստալինի՝ «Լենինն անմահ է մնացել»: Բանաստեղծը վերհիշում է Լենինի մահվան, սովետական ժողովուրդների մեծագույն այդ կորստի ու վշտի օրը և այն նվիրական պահը, երբ Լենինի հանճարեղ զինակիցը տվեց իր պատմական երդումը՝ հավատարիմ մնալու մեծ ուսուցչի ավանդներին:

Ստալինի երդման մեջ «Լենդանի է Լենինը, Լենինն անմահ է մնացել», — ասում է բանաստեղծը:

IV

Սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության մոտիվները մեր պոեզիայում ու ժողովրդական բանահյուսության մեջ պսակվում են ժողովուրդների մեծ Առաջնորդին՝ ընկեր Ստալինին նվիրված ստեղծագործություններով:

Ստալինը սովետական բազմադղ ժողովրդի, Սոցիալիստական Հայրենիքի անպարտելի ուժի ու հզորության սիմվոլն է. ինչպես Զամբուլն է ասում.

«Ստալինի անունով ամեն ինչ հաղթեցինք,
Ստալինի անունով ամեն ինչ կհաղթենք»:

Նրա դյուցազնական կյանքի ու գործունեության մեջ մարմնավորված է Սոցիալիստական մեծ Հայրենիքի հերոսական պատմությունը՝ նրա մոտավոր անցյալը, այսօրը և գալիքը: Ահա թե ինչու մեր գրականության հայրենասիրական-պաշտպանական մոտիվներն օրգանապես կապվում են Առաջնորդի փառապանծ ան-

վան հետ: Առաջնորդին նվիրված ստեղծագործությունների մեծ մասի հիմնական գաղափարը՝ Սոցիալիստական Հայրենիքի պաշտպանությունն է, գլխավորապես այն երկերի, որոնք վերաբերում են 1918—1920 թ. թ. քաղաքացիական կռիվներին և 1941—1945 թվականների Հայրենական Մեծ պատերազմին:

Ստալինն իր հզոր ձեռքով, Ավ. Իսահակյանի արտահայտությունամբ ասած՝ «բարձրացրել է պատմության սուրն ահեղ» «ոճիրներով ծանրաբեռ» հին, կապիտալիստական աշխարհի վրա և այդ դյուցազնական սրի՝ ժողովուրդների ազատագրության այդ կայծակ-թրի հարվածներով՝ ամենուրեք խորտակել է թշնամուն, ապահովել սովետական ժողովրդի հաղթական առաջընթացը դեպի կոմունիզմ:

Ստալինի դյուցազնական ձեռքն է կազմակերպել, նրա ռազմական հանձարովն է լուսավորվել սովետական երկրի հաղթանակը թե՛ քաղաքացիական պատերազմում և թե՛ Հայրենական Մեծ պատերազմում:

Քաղաքացիական պատերազմի թեմայով գրված և Ստալինի անվան հետ կապված երկերից են Ն. Զարյանի «Դյուցազնագիրք» պոեմը, Ս. Տարոնցու «Ստալինի ձեռքը» բալլադը, Վ. Գրիգորյանի «Հերոսական մարտ» պոեմը:

Բանաստեղծ Ս. Տարոնցին իր բալլադում պատկերում է քաղաքացիական պատերազմի ցարիցիյան մի դրվագ կապված Ստալինի անվան հետ: Պարտիզան-հրամանատարի վերհուշի ձևով բանաստեղծը վերակենդանացնում է Ցարիցին—Ստալինգրադի ռուս պաշտպանների հերոսական կերպարներ՝ հանձինս նույն հրամանատարի և ջոկատի խիզախ մարտիկ Իվանչուկի, որոնց մեջ ռուս ժողովրդի ազատագրական պայքարի տրադիցիաները (Իլիա Մուրոմեց, Ստեփան Ռադին) միահյուսվում են մարտական այն նոր տրադիցիաներին, որոնք հաստատվեցին նորածին սովետական կարգերի պաշտպանության համար մղված պայքարում՝ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ:

Պարտիզանը վերհիշում է, թե ինչպես, Ցարիցինի պաշտպանության ժամանակ՝ «թշնամին հանկարծ առաջանալով սկսեց սեղմել», բայց իր ջոկատը հերոսաբար դիմադրում ու դիմանում է ուժերով գերազանց թշնամու հարձակմանը, ներշնչված ու զորացած այն լուրից, որ Ստալինը գալու է ռազմաճակատ:

Բալլադը վերջանում է ծեր-պարտիզանի խորհրդածությամբ Ստալինի ուժի անպարտելիության մասին.

«Նրա մեծ ձեռքն է, ձեռքն հզորագուն,
Որ վարում էր մեր մարտն այն օրերում տաք,
Եվ վարում է մարտն այսօր մեր կյանքում.
Բորբոքում է հուրն մեր կրծքերի տակ,
Եվ մղում է մեզ հաղթարի ու քաջ
Մի՛շտ դեպի առաջ, մի՛շտ դեպի առաջ»:

Բանաստեղծ Վ. Գրիգորյանի «Հերոսական մարտ» պոեմն էլ քաղաքացիական պատերազմի ցարիցիսյան էպոպեի մի դրվագ է պատկերում՝ կապված Ստալինի փառապանծ անվան հետ:

Դեպքը նկարագրվում է հերոսամարտին մասնակից հրամանատարի միջոցով, որպես Սովետական Բանակի մարտական անցյալի վերհուշ:

Կարմիր զորքերը կռվի են բռնվում բազմափորձ ու սպառազեն «թշնամու հետ ահավոր»: Անհավասար ու ահեղ մարտի ընթացքում թշնամուն հաջողվում է կարմիր զորամասին օղակել, բայց այդ ճակատագրական վիճակում իսկ Սովետական Բանակի մարտիկները հավատարիմ են մնում ուղղության զործին, շարունակում են հերոսաբար դիմադրել թշնամուն: Եվ երբ, «գնդի ջահել զինկոմը» հաղորդում է, որ «Ստալինը ժամանել է Յարիցին», օղակված գնդի մարտիկները խանդալառվում են մեծ զորավարի մարտական անունը լսելով: Այնուհետև հերոսամարտը շարունակվում է նոր թափով և ավարտվում է թշնամու ջախջախումով:

Սովետահայ պոեզիայում, այլև ամբողջ միութենական սովետական պոեզիայում Ստալինին նվիրված առաջին ամենածավալուն երկը Ն. Զարյանի «Դյուցազնագիրք—ցարիցիսյան դրվագներ» պոեմն է՝ գրված 1937—1939 թվերին: Ժամանակագրական հաջորդականության տեսակետից, նաև ծավալով՝ երկրորդ գործը տվել է մեր եղբայրական սովետական վրացական պոեզիան. դա Գեորգի Լեոնիձեի «Ստալին» վերնագրով տրիլոգիայի առաջին գիրքն է նվիրված Առաջնորդի մանկությանն ու պատանեկությանը:

«Դյուցազնագիրք»-ում էպիկական լայն կտավի վրա պատ-

կերվում է Ստալինի դյուցազնական կյանքի ու պայքարի ցարի-
ցինյան էպոպեն Սովետական Միության առաջին հայրենական
պատերազմի ընդհանուր ֆոնի վրա:

Իր իդեական-ստեղծագործական հղացումով և իր գեղարվես-
տական կատարման ձևով «Դյուցազնագիրք»-ն անշուշտ մեր գրա-
կանության ամենանշանավոր և արժեքավոր երկերից մեկն է:
Կարելի է վստահությամբ ասել, որ «Դյուցազնագիրք»-ը ոչ պա-
կաս արժեք ունի հայկական ու միութենական պոեզիայում, որքան
որ Ալեքսեյ Տոլստոյի «Հացը» միութենական գրականության պրո-
զայի բաժնում:

Ճիշտ է, պոեմը զերծ չէ առանձին թերություններից, բայց
դրանք ծածկվում, առանձնապես աչքի չեն ընկնում ստեղծագոր-
ծության ամբողջության մեջ, իսկ նրա «Նախերգանք»-ն ու «Վեր-
ջերգ»-ը, և դրվագներից առաջինը բանաստեղծական մտքի հուժ-
կու թռիչքի արտահայտություններ են, որոնց մեջ հոգեպարար
պայծառությամբ ու խորությամբ գեղագրված է մեծ Առաջնորդի
կերպարը:

Ն. Զարյանի այս պոեմի արժեքն ավելի է մեծանում, երբ այն
դիտում ենք մեր պոեզիայի գաղափարական-թեմատիկ զարգաց-
ման ընդհանուր շղթայի մեջ:

Բանաստեղծը խնդիր է դրել սոցիալիստական մեծ ուղու-
ցիայի հաղթական ընթացքի ամենահերոսական, թերևս ամենա-
վճռական դրվագի՝ Յարիցինի պաշտպանության պատկերումը՝ և
դրանով իսկ Առաջնորդի կերպարի պատկերումն իբրև կոմունիզմի
հանձարեղ զորավարի: Վերցնելով, իր՝ բանաստեղծի բառերով ա-
սենք՝ Առաջնորդի «կյանքի դյուցազնական դրվագների լեռնապա-
րի» մի կատարը միայն՝ նա իդեական-գեղարվեստական մեծ ընդ-
հանրացումներ է կատարել, այնպես, ո՞ր՝ «Յարիցինյան դրվագնե-
րի» պատկերման մեջ արտացոլվում է Սովետական Հայրենիքի
հերոսական պատմության տվյալ դարաշրջանն իր հիմնական գծե-
րով, կոնկրետ պատմական այն իրադրությամբ, որ ապրում էր
նորածին սոցիալիստական պետությունը քաղաքացիական պատե-
րազմի ծանրագույն տարիներին:

Ընթերցողի աչքի առաջ վառ պատկերներով վերակենդանա-
նում են մեր ուղուցիայի այդ տազնապալից, բայց և սովետա-
կան ժողովրդի դյուցազնական գործերով լի էպոխան, որի պատ-

մական ֆոնի վրա խոյանում են լենինի և Ստալինի տիտանական
կերպարները օրգանական միասնությամբ, բայց և ամեն մեկն իր
մեծ անհատականությամբ՝ իր հանձարի սեփական լույսով՝ ուն-
լուցիայի հաղթանակը կազմակերպելու և իրականացնելու գոր-
ծում:

Պոեմի բուն մասը, որ բաղկացած է տասերկու դրվագից՝
պատկերում է Ցարիցինի պաշտպանությունը քաղաքացիական
պատերազմի ընդհանուր ֆոնի վրա, պատմական այն նշանավոր
մոմենտից սկսած, երբ Ստալինը նշանակվում է հարավային ճա-
կատի ղեկավար՝ կենտրոնական խնդիր ունենալով Ցարիցինի
պաշտպանության կազմակերպումը, իբրև ամենավճռական օղակը
սովետական պետության բախտի համար: Պոեմի վերջին՝ 12-րդ
դրվագը պատկերում է Ցարիցինի լիակատար ազատագրումը սպի-
տակ բանդաներից և նրա վերանվանումը՝ Ստալինգրադ, այն մեծ
զորավարի անունով:

«Ով Ցարիցինը դարձրեց

Կոմունիզմի անառ բերդը»,¹—

ինչպես ասում է բանաստեղծը:

Բայց «Դյուցազնագիրք»-ը չի սահմանափակվում քաղաքա-
ցիական պատերազմի «ցարիցինյան դրվագներով»: Պոեմի ընդ-
գրկումն ավելի լայն է՝ բանաստեղծը փորձում է Առաջնորդի ողջ
կյանքի ու գործի գեղարվեստական ընդհանրական բնութագիրը
տալ պոեմի ընդարձակ «Նախերգանք»-ում և նրա «Վերջերգ»-ում:

«Նախերգանք»-ում բանաստեղծը մեծ ընդհանրացումներով
նկարագրում-պատկերում է Առաջնորդի մանկությունն ու պա-
տանեկությունը, դպրոցական տարիները, ապա ուսուցիչն ընդ-
հատակյա կյանքն ու պայքարն Անդրկովկասում՝ հակաուկուլուցոն
հոսանքների դեմ, նրա «շղթան աքսորների և փախուստները խի-
զախ», լենինի հետ միասին ուսուցիչայի «բանակի ցրիվ եկած
զնդերի հավաքումն» ու պատրաստումը «հոկտեմբերյան մարտերի
համար», ապա՝ հոկտեմբերյան հաղթանակը, որից հետո՝ «ահա
քաղաքացիական կռիվների էպոպեն», այն տարիները, երբ «սո-

¹ Ն. Զարյան, «Դյուցազնագիրք», էջ 165:

վետների երկիրը՝ ժանտ ոսոխների օղակումն» էր և «երբ հղի էր վտանգով» ռևոլուցիայի հանձարեղ զորավարի «կյանքի ամեն մի րոպեն»:

«Խռովություն, տեռոր ու դավ,
Եվ սով ամեն քաղաքում»,

Բայց՝ ասում է՝ բանաստեղծը՝
«Շողում էիր դու, որպես շանթ հորիզոնից հորիզոն,
Մոսկվայից Դոն,
Դոնից Պիտեր,
Եվ Ուրալից
էլի Դոն:

Շամփրում բոլոր ոսոխներին:
Գեներալներն ըսպիտակ

Փախչում էին խուճապավազ քո պողպատե զարկի տակ:
Մերկացրիր դու անխընա ծրագիրը նենգ պարտության,
Որ պատրաստել էր՝ Հոկտեմբերը վաճառող այն Հուդան՝
Դու կարմիր զորքը հաղթության անխաբ ուղին հանեցիր.
Եվ Դենիկինը կործանվեց բանականերով ցանուցիր»:

Ստալինի դյուցազնական կամքի շնորհիվ քաղաքացիական պատերազմի հարավ-արևելյան ճակատում թշնամին ջախջախվեց ու դրանով իսկ Ստալինը լիովին արդարացրեց ռևոլուցիայի առաջնորդի՝ Լենինի հույսերն ու սպասումները, — ամենակրիտիկական օրերին՝ Ստալինի շնորհիվ՝

«Վոլգան ու Դոնը Մոսկվային
Եվ Պիտերին տրվին հաց,
Ապրեց մանուկը հաղթության
Եվ հայր Լենինը ժրպտաց»:¹

V

Սովետահայ պոեզիայի թեմատիկայում ու մոտիվներում շատ նշանակալից տեղ է գրավում հայ ժողովրդի պատմական ուղին:

¹ Ն. Զարյան — «Դյուցազնագիրք», էջ 98, 1940 թ.:

նրա ռևոլուցոն վերափոխումն ու ազգային վերածնունդը սոցիալիզմի հաղթական կառուցման ընթացքում, նրա զարգացումը իբրև նոր, սովետական, սոցիալիստական ազգ,— իսկ մեր ժողովրդի պատմական բախտի այդ ուղին բանաստեղծներն ամենից ավելի ցայտուն կերպով պատկերում են ժողովուրդների Առաջնորդի կերպարի միջոցով:

Ստալինը հայ ժողովրդի ազատարարն է, նրա կերպարի մեջ միաժամանակ արտացոլվում է մեր ժողովրդի սոցիալիստական ազգային վերածնունդը, անցյալում ճնշված, անհայրենիք, իր «հանձարի կրակն օտար երկրների տակ վառող» ժողովրդի ազատագրումը և զարգացումը սովետական ազատ ժողովուրդների մեծ ընտանիքում:

Այդ մոտիվներն են երգված Ստալինին նվիրված շատ բանաստեղծություններում ու պոեմներում, որոնք միանում են մի հիմնական գաղափարի շուրջ և կարելի է դնել մի ընդհանուր վերնագրի տակ՝ «Ստալինը և հայ ժողովրդի սոցիալիստական ազգային վերածնունդը»:

Բազմադարյան ստրկութունից ազատագրված և իր սոցիալիստական վերածնունդն ապրող հայ ժողովուրդը հոկտեմբերյան դարաշրջանի իր բանաստեղծների միջոցով անհուն երախտագիտական զգացմունք է արտահայտում այն մեծ Մարդուն, որը Հենինի հետ միասին՝ իրեն (հայ ժողովրդին) ընդմիջտ ազատագրեց իմպերալիզմի խեղդող օղակից և փրկության, ազատ ու երջանիկ կյանքի լայն ճանապարհ ցույց տվեց:

Մեծարելով Ստալինին, մեր բանաստեղծներն ու գուպանները ամեն անգամ վերհիշում ու պատկերում են իրենց ժողովրդի տառապանքով ու տանջանքով և ազատագրական պայքարներով ի բազմադարյան պատմությունը՝ մռայլ ստրկական անցյալի և սոցիալիստական ազգային վերածննդի դարաշրջանի ցայտուն կոնտրաստներով:

Պատմական այդ իրադրության առաջին ուժգին արձագանքը սովետահայ պոեզիայում՝ մեր անվանի բանաստեղծ Ն. Զարյանի «Ստալին» ոգեշունչ ներբողն է: Այդ բանաստեղծությամբ է սկսվում հայ ժողովրդի ազատագրության և սոցիալիստական ազգային վերածննդի կենսաթրթիռ ընթացքը՝ օրդանապես կասկած մեծ Ստալինի անվան հետ: Մեր պոեզիայում այդ հիասքանչ բանա-

ստեղծութեամբ է նշանավորվում Ստալինի նվիրական անունը, իբրև հայ ժողովրդի պատմական բախտի մեծախորհուրդ սիմվոլ, Ստալինի, որպես ժողովուրդների հանճարեղ Առաջնորդի համամարդկային դերի պատկերման հետ միասին: Մեր պոեզիայում առաջին անգամ այդ բանաստեղծության մեջ է Ստալինի անունը սիմվոլանում իբրև բոլոր ժողովուրդների, ամբողջ մարդկության սոցիալիստական վերածննդի, սոցիալիստական ուղուցիտն ունենալուսի դարաշրջանի համայնապարփակ արտահայտություն:

Ներքոյի սկզբի մասում բանաստեղծը Ստալինի անունը սիմվոլացնում է, իբրև կոմունիզմի «արեգնային շորրորդության» մարմնացում, Ստալինն իբրև Մարքսի—Էնգելսի և Լենինի ուսմունքի ու ուղուցիտն գործի հետագա զարգացման կրողն ու հաղթական վախճանին հասցնողը:

Բանաստեղծն ասում է, որ մինչև Մարքսի ու Էնգելսի, Լենինի ու Ստալինի հանդես գալը «տառապած մարդու համար չէր ճառագել մի արև» և միայն այդ «արեգնային շորրորդության» հանճարով է սկսվում տառապած մարդկության ազատագրության դարաշրջանը: Ահա, թե ինչու, շարունակում է բանաստեղծը.

«Ձի՛ խավարի ծիրանավառ հորիզոնում պատմության,
Ձեր հանճարի արեգնային շորրորդությունը տիտան,
Կրծավալվի նա անսահման, հավերժաբար կարևի
Եվ կըպատուի մըշուշն անցյալ և ապագա դարերի:
Հազար Հոմեր ու Ֆիրդուսի կառնեն գրիչ ու քրնար,
Ու երգելով չեն սպառի Ձեր մեծությունն անհնար.
Կերգեն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր
Կըտան դարերը Ձեզ վայել հուշարձաններ փառավոր»:

Եվ ապա իր ներքոյի հաջորդ մասում բանաստեղծն ասում է, որ ինքը իբրև Ստալինի «զինվորը խանդավառ, հայ լենինյան բանաստեղծ», «բերում է նրան իր ժողովրդի երախտապարտ սիրտը մեծ». երգում է «ամենքին հարազատ» մեծ Ստալինին, «ազգերի երջանկության ճարտարապետին ու դարբնին»: Այս մասում զեղարվեստական մեծ ուժով, խորիմաստ պատկերավորությամբ տրված է հայ ժողովրդի պատմության ամենատագնապալից մոմենտը, երբ իմպերիալիստական պատերազմն սպառնում էր լիովին ոչնչացնել հայ ժողովրդին և ինչպես, որ ոչնչացրեց նրա մոտ

մեկ միլիոնանոց հատվածը բարբարոսական Թուրքիայում, երբ՝ մանավանդ 1917—1920 թ. թ. նա (հայ ժողովուրդը) իրոք կանգնած էր կործանման «մութ վիհի եզերքին» և միայն հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի, Լենինի ու Ստալինի շնորհիվ փրկվեց՝ միանալով «կոմունիզմի աշխարհաերթ բանակին»:

«Կանգնած էր նա, իմ ժողովուրդը, մութ վիհի եզերքին՝
Իր հանճարի հազարամյա մարգարիտները ձեռքին,
Կանգնած էր նա անդունդի մոտ, անօգնական ու հյուծված,
Արյունակից և ալազդի ոսոխներից հալածված,
Մահվան մթին մրրիկների ամենակուլ բերանում
Նա՝ հոշոտված բազուկներով, մի նոր ելք էր որոնում:
Ազատարար Հոկտեմբերի քայլերն այնժամ թնդացին,
Հնչեց քո ձայնը լենինյան, Լենինի հետ միասին.
Դուք օգնության լույս նետեցիք ժողովրդին իմ շոքած,
Դուրս կոչեցիք մահվան վիհից դեպի կյանքի դուռը բաց:
Նա վեր կացավ գոտեպնդված, ոստնեց թափով ահագին,
Ու միացավ կոմունիզմի աշխարհաերթ բանակին»:

Ներքողի վերջին մասում բանաստեղծը պատկերում է Լենինի մահն ու նրա թողած ցնցող ազդեցությունը ողջ աշխատավորության վրա, և պատկերում Ստալինին, իբրև Լենինի գործի հավատարիմ շարունակողի, որը՝ «նախորդների հզոր լույսով և իր լույսով սեփական» — տանում է մեր երկիրը՝ Սովետական Հայրենիքը՝ «դեպի պայծառ ապագան»:

«Անունըդ խոր երգի նրման մարդկանց հոգին ողողում,
Թևեր տալիս ու հիասքանչ հերոսության է մըղում:
Եվ իմ չքնաղ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում
Իր նոր աշխարհն է կառուցում քեզնով լեցուն մի սերունդ:
Եվ ես՝ նրա ծոցից ելած մի խանդավառ բանաստեղծ,
Բերում եմ քեզ իմ երջանիկ ժողովրդի սերը մեծ:
Երգում եմ քեզ, Մե՛ծ Ստալին, դու հարազատ ամենքին,
Դու մարդկային երջանկության ճարտարապետ ու դարբին»:¹

¹ Ն. Զարյան — Երկեր, էջ 100, 1945 թ.:

Ոգեշունչ այս քառյակներում տրված է մեծ Ստալինի, իբրև ժողովուրդների հարազատ ու սիրելի Առաջնորդի ցայտուն բնութագիրը և թե միաժամանակ հայ ժողովրդի երջանկությունն ու մեծ սերը, նրա անսահման երախտագիտական զգացմունքը Ստալինի նկատմամբ:

Ն. Զարյանի այս բանաստեղծությունը սովետահայ պոեզիայի մեծարժեք ու մնայուն երկերից է, սովետահայ կլասիկայի փայլուն էջերից մեկը: Տեղին է հիշել, որ բանաստեղծը երջանկություն է ունեցել իր այդ ստեղծագործությունը՝ դեռ մինչև նրա տպագրվելը՝ անձամբ արտասանել Կրեմլի Պալատի պատմական ամբիոնից՝ մեծ Ստալինի ու նրա զինակիցների ներկայությամբ՝ 1935 թվի վերջերին՝ Սովետական Հայաստանի դեկեադայի ընդունելության ժամանակ:

Սովետահայ պոեզիայում առաջին անգամ այս բանաստեղծության մեջ է՝ Ստալինի, իբրև ժողովուրդների Առաջնորդի համամարդկային դերը միացվում է նրա՝ իբրև հայ ժողովրդի ազատարարի ու սոցիալիստական ազգային վերածննդի պատկերմանը:

Հայ ժողովրդի պատմական բախտի ճանապարհի և նրա ազատագրման ու սոցիալիստական վերածննդի մի ծավալուն բանաստեղծական պատկերն է տրված՝ հայկական մեծ էպոսի՝ «Սասունցի Դավիթ» 1000-ամյակի առթիվ կայացած հանդիսավոր նիստի անոնից՝ ընկեր Ստալինին ուղղված «Նամակ-ողջույնում»: Այդ նշանավոր պատմական «Նամակի» հեղինակներն են մեր կլասիկ պոեզիայի մեծ վարպետ, այժմ Ստալինյան մրցանակի լաուրեատ՝ Ավ. Իսահակյանը, մեր անվանի բանաստեղծներ Ն. Զարյանը, Գ. Սարյանը, երիտասարդ սերնդից՝ Գ. Բորյանը, և Սիլվա Կապուտիկյանը: Պատկերելով հայ ժողովրդի անցած բազմադարյան ուղին, սոցիալիզմի հիմքի վրա վերածնված Հայաստանը, «Նամակ-ողջույնը» պատկերում է միաժամանակ բոլշևիկների հզոր պարտիայի ու ժողովուրդների մեծ Առաջնորդ Ստալինի դերը հայ ժողովրդի պատմական բախտի, նրա ազատագրության ու վերածննդի գործում, խորը հուշականությամբ արտահայտում ազատագրված հայ ժողովրդի նվիրական զգացումներն ու խոհերը մեծ Առաջնորդի նկատմամբ:

«Նամակ-ողջույնը» թե իր պատմական ու գաղափարական բովանդակությամբ և թե իր գեղարվեստական արժեքով բացառիկ

մի ստեղծագործություն է սովետահայ պոեզիայում, իբրև հայ ժողովրդի պատմական բախտի ուղին պատկերող և իբրև Ստալինի կերպարը գծագրող բանաստեղծական երկ:

«Նամակ-ողջույնի» սկզբում արտահայտված է հայ ժողովրդի երախտագիտական զգացմունքը Առաջնորդի նկատմամբ այն բանի համար, որ նրա շնորհիվ է մեր ժողովուրդը հասել՝ ժողովուրդների «լենինյան եղբայրության ծիածանին» և տոնում է «արդարախոս իր հանճարի հաղթարամյակը»:

«Եվ իր սրտի նվիրական խոսքը նա քե՛զ է ձոնում,
Քե՛զ, մեր հզոր կուսակցության առաջնորդիդ պանծալի,
Որ ծիածանն այս կապեցիր հորիզոնում աշխարհի:
Քե՛զ, որ Դավթի և Մհերի վսեմությունն ըզգացիր,
Ժողովրդի խորունկ սրտից արև աշխարհ հանեցիր»:

Հարկ է հիշել, որ մեր ազգային հերոսական էպոսի 1000-ամյակի հոբելյանը կատարվեց նույն այն օրերին, երբ Արևմտյան Եվրոպայում քունկվեց երկրորդ համաշխարհային պատերազմը, երբ այդպիսով մեր մեծ Հայրենիքի արևմտյան և հեռավոր Արևելյան հորիզոններում կուտակվում էին շարագուշակ ամպեր:

Պատմական-քաղաքական այդ իրադրության խորագրաց անդրադարձումը կա «Նամակ-ողջույնում» և անսասան հավատ, վրաստահություն մեծ Առաջնորդի ուժի ու կամքի նկատմամբ, որ բանաստեղծներն արտահայտում են՝ մեր էպոսում ազատասեր ժողովրդի հզորությունն արտահայտող Թուր-կայծակի սիմվոլով:

«Եվ դո՛ւ այսօր, մեծ Առաջնորդ, բռնել ես կուռ քո ձեռքին
Աշխարհների ազատության վճիռը՝ Թուր-կայծակին.
Դու բռնել ես Թուր-կայծակին, իբրև անհաղթ դյուցազուն,
Եվ շողացնում ես աշխարհում հորիզոնից հորիզոն:
Եվ այդ թրի հովանու տակ խաղաղ ու շեն մեր երկրում
Ռամիկն ազատ, համայնական իր անդաստանն է հերկում»:

«Նամակ-ողջույնի» վերջում արտահայտված է անսասան հավատ բազմազգ Սովետական Հայրենիքի հզոր ուժի ու անպարտելիության մասին, սովետական ազգերի ստալինյան եղբայրության՝

նրանց քաղաքական-բարոյական միասնության գաղափարը, ժամանակակից մարա-մելիքների հնարավոր հարձակման դեպքում՝ սովետական ժողովրդի հաղթանակի հեռանկարը: Եթե նրանք հարձակվեն մեր երկրի վրա՝ նրանց դեմ միասնաբար կբարձրանան սովետական ազգերը.

«Թուր-կայծակին նրանց ձեռքին կշառաչի նորից նոր,
Նրա հրզոր հարվածներից կխորտակվեն խավարչտին,
Արյամբ զանգված գահերն ամեն և պալատները վերջին,
Մեր խոլ ցասման հրդեհներում կդառնան մուր ու մոխիր,
Աշխատանքի, երգի, սիրո թրշնամիները զաղիր,
Կանեանան նրանց կարգերը, օրենքներն աշխարհում,
Եվ կըշողա դրոշը մեր շղթայազերծ աշխարհում»:¹

Պատմական դարգացման ընթացքի բերումով՝ սովետահայ բանաստեղծների հղացած այդ պատկերներն իրենց նոր արտահայտությունն ու մարմնավորումն ստացան Հայրենական Մեծ պատերազմում. ժողովուրդների մեծ Առաջնորդն «իբրև ամենահաղթ դյուցազուն»՝ ողջ «աշխարհում՝ հորիզոնից հորիզոն շողացրեց» սովետական բազմազգ ժողովրդից ստացած՝ «աշխարհների ազատության վճիռը՝ Թուր-կայծակին» և նվաճեց պատմական մեծագույն հաղթանակը:

Հայ ժողովուրդն այդ հաղթանակի մարտական մասնակիցը եղավ՝ իր սերն ու նվիրվածությունն արտահայտելով Ստալինին ու Սոցիալիստական Հայրենիքին:

Եվ այդ էլ իր խորը և ուժգին արձագանքը գտավ 1941—1945 թվերի սովետահայ պոեզիայում՝ հանճարեղ Առաջնորդի նվիրական կերպարի կերտման գեղարվեստական նոր արտահայտություններով:

VI

Հայրենական Մեծ պատերազմի դյուցազնական շրջանի մեր պոեզիայում, ինչպես և վերջին տարիներում Հայրենական պատե-

¹ «Գրական թերթ», № 26, 1939 թ., 20 IX:

բազմին նվիրված բանաստեղծություններում ու պոեմներում սովետահայ պոետներն ու գուսանները պատկերում են Ստալինին, որպես անսպարտելի հանճարեղ զորավարի, որի շնորհիվ թե սովետական ժողովուրդները և թե ողջ մարդկությունը փրկվեցին գերմանա-ֆաշիստական ստրկության սպառնալիքից:

Ամենից առաջ պետք է հիշել Նալիբի Զարյանի մի շարք բանաստեղծությունները՝ գրված 1941—1945 թվերին՝ «Կոմունիզմի զորավարը», «Կոմունան կապրի», «Լսե՛ք, դարե՛ր», «Ազատության զորավարին» և այլն: Բացի սրանցից՝ Ստալինի անունն է հնչում նաև «Ուղերձ իմ ժողովրդին», «Պարծանք», «Կապիտան Գաստելլո» բանաստեղծություններում, «Ձայն հայրենական» պոեմում և «Վրեժ» չափածո դրամատիկական երկում: Հաղթանակի հավատով տոգորված բոլոր այդ բանաստեղծություններն էլ հարուստ պատկերավորությամբ վերակենդանացնում են Հայրենական Մեծ պատերազմի էպոխան:

Ահա Հայրենական Մեծ պատերազմի սկզբի օրերն ու շաբաթները, երբ գերմանա-ֆաշիստական սպառազեն հորդաները վայրագ կատաղությամբ սողում էին դեպի Արևելք՝ մեր Հայրենիքի ուկրաինական ու բելոռուսական դաշտերի ու անտառների միջով: Ահեղ ու տագնապալից այս օրերին՝ Ստալինը նշանակվում է Սովետական Միության զինված ուժերի ղեկավար՝ Պաշտպանության ժողովրդական Կոմիսար: Բանաստեղծն իսկույն արձագանքում է պատմական այդ նշանակալից մոմենտին, իմաստավորում է այն՝ գծագրելով Ստալինի կերպարը, որպես «կոմունիզմի զորավարի»:

Իբրև բնաբան վերցնելով իր «Դյուցազնագրքից» հետևյալ տողերը՝

«Եվ ուղարկում էր քեզ Լենինը այն ճակատները դաժան,
Որտեղ ապրում էր հայրենիքն օրհասական ճգնաժամ»—

դրանով բանաստեղծը պատմական-գաղափարական կամուրջ է կապում սովետական ժողովրդի առաջին և երկրորդ Հայրենական պատերազմների միջև, հիշեցնում՝ Ստալինի, իբրև զորավարի ցարիցինյան էպոպեան, երբ Ստալինի հանճարեղ ստրատեգիական պլաններով նորաստեղծ Կարմիր Բանակը խորտակեց գերազանց զինվածությամբ թշնամուն և երբ՝

«Ապրեց մանուկը հաղթության
Եվ հայր Լենինը ժպտաց...»:

Պատմական, ահա, այդ լայն հեռանկարի մեջ է բանաստեղծը պատկերում Ստալինին, իբրև Հայրենական Մեծ պատերազմի զորավար: Բանաստեղծության մարտական հանդիսավոր տոնի մեջ ուժգնորեն արտահայտվում է ժողովրդի — հայրենիքի հույսն ու վաստահությունը մեծ Առաջնորդի նկատմամբ, նրա կամքի ու հանձարի նկատմամբ՝ ահեղ թշնամու ջախջախման, նրա անխուսափելի պարտության և Սովետական Բանակի հաղթության հեռանկարով:

«Ելավ Ստալինն — առաջնորդը մեծ ժողովուրդների,
Ելավ ու կանգնեց իր վիշապաքաղ բանակի գլուխ.
Եվ աշխարհն ասաց. — «Նա մեզ հաղթանակ և լույս կբերի»:
Թշնամու հոգուն տիրեց մառախուղ:

Կոմունիզմի զորավարն իր մեջ կրում է Լենինի ուժը և մեր Հայրենիքի անցյալի ու նոր ժամանակների մեծ զորավարների հարուստ փորձը, ինչպես և իր սեփական փորձը, նաև «աշխարհաշեն ժողովուրդների խոհերն իմաստուն», նրանց ազատասիրական ոգին, ահա այդ ամենի շնորհիվ՝ ժողովուրդը, հավատով լցված հաղթանակի նկատմամբ, այս դադափարն է մարմնավորված Զարյանի բանաստեղծության մեջ:

«Զայն հայրենական» պոեմում (1943 թ.) Ն. Զարյանը Ստալինին բնութագրում ու պատկերում է իբրև Հայրենական ազատագրական Մեծ պատերազմի «ոյուցադնահայր զորավար», —

«Որ մի ձեռքում բռնել է թուրն ազատության,
Եվ մի ձեռքում վերածնության սպեղանին»:¹

Ստալինը թե՛ ժողովրդի ազատագրական պատերազմն է վարում և թե՛, միաժամանակ, մտահոգված է վերականգնելու այն, ինչ ավերում է վայրագ թշնամին, բուժելու բոլոր վերքերը՝ սոցիալիս-

¹ Ն. Զարյան — «Շիկացած հոգով», էջ 22, 1943 թ.:

տական «վերածնության սպեղանիով»: Զարյանի հետագա բանաստեղծություններում պատկերված է կոմունիզմի զորավարի ուժն իր հաղթական գործողության ընթացքի մեջ, Հայրենական Մեծ պատերազմի կարևորագույն էտապների անդրադարձումով:

Ահա բանաստեղծի «Լսե՛ք, դարեր» էպիկական-դյուցազներգական ֆրագմենտը (1942 թ.), որ պատկերում է մեր Հայրենիքի մեծ մայրաքաղաքի՝ Մոսկվայի պատմական ճակատամարտը գերմանա-ֆաշիստական զրահապատ ուժերի դեմ և որը գրված է հենց այդ ճակատամարտում Սովետական Բանակի տարած հաղթանակի անմիջական տպավորության տակ՝ 1942 թ. հունվարին:

Թե իբրև գրական-պատմական դոկումենտ և թե իբրև դեղարվեստական ստեղծագործություն «Լսե՛ք, դարեր»-ը մեծարժեք գործ է, գրված իրեն՝ բանաստեղծին հատուկ էպիքական-հերոսական մեծ շնչով ու ոճով, այնպես որ նրա ընթերցումով այժմյան և «հեռավոր գալիքների սերունդներն» էլ կզգան, կվերապրեն ու կըպատկերացնեն Մոսկվայի դյուցազնամարտը, կպատկերացնեն պատմական այն ահեղ իրադրությունը, որի պայմաններում տեղի ունեցավ Հայրենական պատերազմի առաջին մեծ ճակատամարտը, որի ֆոնի վրա բարձրանում է հանձարեղ զորավարի դյուցազնական կերպարը՝ «նրա ուրվանկարն ահագին» — ինչպես ասում է բանաստեղծը:¹

Ստալինին նվիրված այն բանաստեղծությունները, որոնք գրված են Հայրենական Մեծ պատերազմի սկզբին (գլխավորապես 1941 թվին) Առաջնորդի կերպարը դիտում են մինչպատերազմյան խաղաղ կյանքի և պատերազմի հակադիր ֆոնի վրա, որպես միաժամանակ և աշխարհի խաղաղության, և ժողովուրդների ազատագրական պատերազմի սիմվոլ:

Ստալինի կերպարի մեջ այդ միասնական գաղափարի մարմնավորման մի գեղեցիկ նմուշ է Գևորգ Էմինի՝ «խաղաղության ծխամորճը» վերնագրով բանաստեղծությունը (1941 թ.): Սկզբի մասում բանաստեղծը Ստալինին պատկերում է իբրև ժողովուրդների — «ազգերի մեծ եղբայրության», աշխարհի «սուրբ խաղաղության» սիմվոլ:

¹ Ն. Զարյան — Երկեր, հ. 1-ին, էջ 189—192:

«Խաղաղ էին հող, օվկիան և երկինք,
Եվ դու, ազգերի մեծ եղբայրության
Ծխամորճն էիր բռնել քո ձեռքին,—
Ծխամորճը քո սուրբ խաղաղության,
Որի կապույտ ու հավերժ ծխի տակ
Ծաղկում էր ազատ ու մի նոր երկիր...»:

Բայց ահա թշնամիները խախտեցին խաղաղությունը, ահեղ
պատերազմի «մրրիկը պայթեց մեր կարմիր հովտին», «արյունով
լցվեց երկիր ու երկինք» և նա, ասում է բանաստեղծը՝ «ամենա-
խաղաղ իմաստունն» աշխարհում՝ «սուրբ խաղաղության ծխամոր-
ճի» փոխարեն՝ ազատագրական պատերազմի փրկարար «սուրն է
բռնում կրկին».

«Սուրը՝ սրբացած անհուն դարերում,
Սուրը՝ մկրտված լենինյան հրում,
Պատմության ուժով ու կամքով կռված
Կրկին քեզ տվեց ժողովուրդը մեր,
Որ հողմերի դեմ փոթորիկ ծնես
Եվ տիեզրքից արյունը լվաս...»:

Ստալինը Հայրենական ազատագրական Մեծ պատերազմի
զորավարն է, որ բարձրացրել է իր ահեղ «ցասման սուրն»՝ աշ-
խարհավեր «վայրի ցեղերի» դեմ.

«Զա՛րկ, մրրիկները քեզնով են շնչում,
Եվ տիեզերքը քո զարկն է տենչում»

ասում է բանաստեղծը:

Ստալինի զարկից է կախված աշխարհի ու մարդկության
բախտը, նրա զարկից կխորտակվի թշնամին և կրկին խաղաղու-
թյունը կտիրի ողջ աշխարհում — տիեզերքում՝

«Զա՛րկ, և կրկին առ ծխամորճը քո,
Եվ խաղաղության ծիծեռնակը թող
Իր բույնը հյուսի ողջ տիեզերքում»:¹

¹ Գ. Էմին—Խաղաղության ծխամորճը, էջ 3--4, 1942 թ.:

Հայրենական պատերազմում Սովետական Բանակի ու նրա շարքային զինվորների և սովետական հրամանատարության ու Գերագույն Հրամանատարի՝ Հայրենական պատերազմի մեծ զորավարի միասնությունը պատկերելուն է նվիրված Գ. էմինի «Կրակը» վերնագրով բանաստեղծությունը (մշակված ըստ Կեդրինի), որն իր ժանրային առանձնահատկությամբ նոր տիպի բալլադ է, ժողովրդի ազատագրական մեծ պատերազմը պատկերող հերոսական բալլադ:

Առերևույթ «մի դեպքի», բայց ըստ էության ողջ պատերազմի ընթացքի համար բնորոշ այդ նկարագրության մեջ բանաստեղծը լայն ընդհանրացում է կատարել և գեղարվեստական մեծ խտացմամբ տվել է Սովետական Բանակի, իբրև ժողովրդական ազատագրական բանակի մարտական-բարոյական միասնությունը:

Սովետական Բանակի ամեն մի զինվոր ու հրամանատար, զնդապետ, թե մարշալ՝ կարող է ասել, որ իրեն է վերաբերում այն՝ ինչ նկարագրված է բալլադում.

«... Այս դեպքը պատմում են ամեն մի ճակատում,
... Եվ ամեն մի զինվոր իր մասին է պատմում»:

Բալլադի սյուժետային-գաղափարական առանցքը կազմող՝ զինվորի այրվող տան կրակի մետաֆոր-պատկերը վերցված է իբրև ընդհանրական սիմվոլ, որ արտահայտում է Սովետական Բանակը ոգեշնչող Հայրենական ազատագրական պատերազմի ոգին՝ սովետական ժողովրդի անհուն հրեղեն ցասման ուժը, որով համակված՝ Ստալինի հզոր բանակը՝ մեծագույն հաղթանակ նվաճեց՝ իր անպարտելիության մասին զառանցող թշնամու դեմ: Ռազմաճակատի հաջորդական օղակներով սովետական շարքային զինվորի այրված հայրենական տնակի կրակը, որը թշնամու դեմ պատճառած նրա վիշտն ու վրեժի ցասումն է խորհրդանշում, հասնում է Մոսկվա՝ Գերագույն Գլխավոր Հրամանատարին և իր անդրադարձումը գտնում թշնամու ջախջախման ու հայրենի հողի ազատագրման մեծ հաղթանակի նվաճման գործում: Ահա բալլադի այդ վերջին մասը.

«Եվ այսպես, կռվում էր զինվորը ճակատում,
Կռվում... ու չգիտեր (որտեղի՞ց իմանար),

Որ մարշալն այդ պահին Մոսկվա էր շտապում,
 Զինվորի կրակով գլանակը վառած:
 Ծխում էր մարշալն ու զեկուցում Կրեմլին,
 Եվ ասում են, երբ որ մարշալը դադարեց,
 Ստալինը հանգիստ բարձրացավ իր տեղից
 Եվ նրա կրակից ծխամորճը վառեց...
 Վառեց ու հաղթության հրամանը գրած
 Ժողովուրդը կոչեց շինարար սխրանքի»:

Իսկ այնուհետև՝ նույն զինվորի վշտի ու ցասման կրակը
 շարունակեց վառ մնալ՝ Սովետական Միության խաղաղության
 համար մղվող պայքարում:

«... Եվ իբրև՝ Մոլոտովն Առամբլեա թռավ՝
 Գլանակը վառած ճիշտ նույն այդ կրակից»:¹

Այսպիսով՝ բանաստեղծը՝ ռազմաճակատային մի շատ պարզ,
 առօրեական սյուժետի շուրջը հյուսել է մի խորիմաստ բանաստեղ-
 ծական պատմվածք, որը ռեալիստական ցայտունությամբ արտա-
 հայտում է ողջ Հայրենական Մեծ պատերազմի ընթացքը՝ Սովե-
 տական Բանակի ու Ժողովրդի ռազմաքաղաքական ու քարոյական
 միասնությունը ահեղ թշնամու ջախջախման համաշխարհային
 պատմական հաղթանակի նվաճման գործում:

VII

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտումը և
 անցումը խաղաղ կյանքին, ստալինյան նոր հնգամյակի կատար-
 ման համար մղվող պայքարին՝ իրենց լայն և հուժկու արձագանքն
 են գտնում մեր պոեզիայում, ըստ որում ամենից առաջ Ստալինին
 նվիրված բանաստեղծություններում:

Բանաստեղծներն արտահայտելով սովետական ժողովուրդնե-
 րի նվիրական զգացումները, նրանց սիրո և երախտագիտության
 ապրումները՝ մեծ Ստալինի նկատմամբ, գեղարվեստական բազ-
 մազան ձևերով պատկերում են նվաճված մեծագույն հաղթանակի

¹ Գ. Էմին—«Նոր հանապարհ», էջ 45—47, 1949 թ.:

նշանակութիւնը թե՛ Սոցիալիստական Հայրենիքի և թե՛ աշխարհի համար, փառաբանում են Ստալինին որպէս անպարտելի հանձարեղ զորավարի, ժողովուրդների իմաստուն Առաջնորդի, որպէս ողջ աշխատավոր մարդկության մեծագույն բարեկամի: Բանաստեղծներն ու երգիչները Ստալինի նվիրական կերպարի մեջ տեսնում են հետպատերազմյան խաղաղ կյանքն ու հերոսական ստեղծագործական աշխատանքը սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ճանապարհին, որ լուսավորված է Ստալինի հանձարով:

Սովետական Միութեան ժողովուրդների մղած Հայրենական Մեծ պատերազմի համաշխարհային պատմական հաղթանակը Ստալինի անվան մեջ է մարմնավորում բանաստեղծ Հ. Շիրազն իր՝ «Մեծ Ստալինին» նշանավոր բանաստեղծութեամբ: Բանաստեղծութիւնը գրված է ֆաշիստական Գերմանիայի միջնաբերդի՝ Բեռլինի անկման անմիջական տպավորութեան տակ և խորապէս արտահայտում է սովետական հզոր բանակի մեծագույն հաղթանակի առաջացրած հպարտութեան ու երջանկութեան այն ապրումը, որով համակված էր սովետական ժողովուրդը մեծ Հաղթանակի օրերին:

Բանաստեղծութեան առանցքային գաղափարն այդ զգացման մարմնավորումն է՝ ինչպէս՝ և Ստալինի, իբրև հանձարեղ զորավարի, Հայրենական պատերազմի հաղթանակը կազմակերպողի մեծութիւնը նշանավորելու միտքը:

«Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստութեան»:

Յուրաքանչյուր քառյակից հետո կրկնվող այս երկտողը բանաստեղծական մեծ գյուտ է, մի հոյակապ պատկեր, որով արտահայտվում է Ստալինի անշափելի մեծութիւնն ու հզորութիւնն, իբրև զորավարի:

«Մարշալներդ արշավեցին Բեռլին տանող ճամբաներով,
Արյունահեղ կովից ելան սարերի պէս բաց ճակատով:
Դու կոփեցիր նրանց ոգին, դու կոփեցիր սուրը նրանց,
Քի՛չ են երկրի փառքերը քեզ, ո՛վ զորավար անգերազանց:
Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստութեան:

Աշխարհն ահա մի աշք դառած քեզ է նայում բյուրականահույս,
Դու մեր գալիքն առավոտող հորիզոնն ես հազարալույս,
Խորտակված են մահախուճապ դարպասները Բեռլինի գոռ,
Զորքդ հաղթած ներս է մտել, ինչպես գարունն ամենազոր:
Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան,
Քանզի կուրծքդ մի երկինք է քո մեծ սրտով իմաստության»:

Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակն է պատկերում,
Ստալինի փառքն է երգում Հ. Շիրազը նաև իր՝ «Առաջնորդին»
վերնագրով ներբողում:

«Իջնեմ ծովերն ու դուրս բերեմ մարգարիտները ծովերի,
Ելնեմ երկինք ու հավաքեմ քոլոր քույլերը աստղերի,
Էլի քի՛չ են իբրև բառեր հաղթանակի գովքի համար,
Խինդի համար խաղաղության, որ հեղեղեց սիրտ ու աշխարհ...»:

Բանաստեղծն իր ներբողի վերջում ասում է, որ ոչ միայն
քոլոր «մարգարիտները ծովերի», և քոլոր քույլերն աստղերի, այլև
ողջ տիեզերքի լույսն իբրև թանաք և «երկինքը՝ թուղթ՝ քի՛չ է
դարձյալ» — Ստալինի մեծությունն ու փառքը երգելու համար:
Մի այլ բանաստեղծությամբ Շիրազն ինքնատիպ մետաֆորներով
պատկերում է Սովետական Բանակի հերոսական գնդերի հաղթա-
կան վերադարձը և հաղթանակի մեծ զորահանդեսը Մոսկվայում՝
Կարմիր հրապարակում.

«Հորիզոնն է երկնակապույտ, բայց կայծակին է տալիս.
Այդ սրարշավ խնդությունն է, այդ մեր քաջերն են գալիս. —
Ու դարբասները լայն բացեց՝ մեր սրտի պես՝ Մոսկվան,
Ծիածանն էլ կամուրջ կապեց, որ երկնքի միջով գան»:

Ահա և Կարմիր հրապարակը, ուր Առաջնորդը զորահանդեսն է
ընդունում. «անցնում էին բանականները մեր փառքի, հրապարակն
ասես ծովն էր մեր հաղթության հորձանքի».

«Երկինքն անգամ կռանում էր և աստղերի շուրթերով
Համբուրում էր ճակատները բանականների փառածով.
Եվ հավերժի նման կանգնած՝ Իլիչի հետ իմաստուն
Առաջնորդն էր հաղթանակի զորահանդեսն ընդունում...

Ու Երկինքն էր ծխածանել, այդ հաղթության ցնծագին
Ստալինի սրտի շողքն էր, որ դիպել էր երկնքին»:

Սովետական Հայրենիքի հաղթանակի ու խաղաղ կյանքի երգն
է երգում բանաստեղծ Աշոտ Գրաշին՝ հաղթանակի ու խաղաղու-
թյան մեջ տեսնելով Մեծ Ստալինի հզոր գաղափարների, նրա
հանճարի մարմնացումը կյանքում, ժողովրդի ստեղծագործական
աշխատանքում:

«Ես երգում եմ երկիրը, ուր ծխամորձն Առաջնորդի
Մրրիկներից հետո նորից խաղաղ կեցած Մասսի նման
Զյունանման ծուխն է ծխում խաղաղության,
Խառնում լեռները լվացող եթերային թարմ կապույտին»:

Առաջնորդի ծխամորձից հանդարտորեն դեպի վեր բարձրա-
ցող «ձյունանման ծուխը» բանաստեղծը սիմվոլացնում է իբրև
խաղաղության արտահայտություն:

«Ահեղ մրրիկներից հետո նորից» սովետական ժողովուրդն իր
հերոսական խաղաղ աշխատանքին է անցել և ամենուրեք իրակա-
նացվում են Ստալինի գաղափարները, նրա մեծ խոհերն ու երա-
զանքները, նրա հզոր կամքն ու նախագծումները: «Առաջնորդի
խոսքը դառնում է ցորենի արտեր անհուն», «Առաջնորդի իղձը» ի-
րականանում է նրանով, որ աշխատանքի հերոսները «հողի բյուր
ընդերքի դարպասներ են բացում» անսպառ դարձնելով «հարստու-
թյունը ժողովրդի», «Առաջնորդի խոհը» մարմնավորվում է իբրև
«հիդրոշեն վայրի գետի կրծքին»՝ «խուլ մի կիրճում, կամ ամալի
տափաստանում», «Առաջնորդի կամքը կուռ նավերի երամ է դառ-
նում» հայրենական ծովերի վրա, որպեսզի այլևս «թշնամին չվր-
դովի անդորրը մեր առավոտի»:

Վերջապես՝ ասում է բանաստեղծը, իմ հայրենիքումն նայ-
վածքն Առաջնորդի՝

«Հո՛ւյս է դառնում,
Հո՛ւյզ է դառնում,
Հավերժանում աչքերի մեջ իմ սերնդի»:¹

¹ Աշոտ Գրաշին — «Եղբայրության աստղի տակ», էջ 66—67, 1949 թ.:

Հայրենական Մեծ պատերազմի տարիների և հետպատերազմյան շրջանի մեր պոեզիայում ու ժողովրդական ստեղծագործության մեջ նոր ուժով արտահայտվեց հայ ժողովրդի պատմական բախտի մոտիվը: Հայրենական Մեծ պատերազմի ու նրա հաղթական ավարտման պատկերումը՝ Ստալինի կերպարի մեջ սովետահայ բանաստեղծները սերտորեն կապակցում են հայ ժողովրդի պատմական բախտի հետ, Սովետական Միության նվաճած համաշխարհային պատմական հաղթանակի նշանակությունը իմաստավորում են նաև այդ տեսակետից:

Բայց՝ ի տարբերություն նախապատերազմյան շրջանի, այս տարիներին՝ հայ ժողովրդի պատմական բախտի թեման հարըստանում է մի նոր մոմենտով՝ տարաշխարհիկ, պանդուխտ հայերի հայրենադարձի արձագանքներով: Հայտնի է, որ նախքան հայրենադարձը արտասահմանում հայրենազրկության դատապարտված ազատասեր ու հայրենաբաղձ հայերը ակտիվ համակրանք արտահայտեցին Սովետական Միության նկատմամբ և հաստատորեն կանգնեցին նրա պաշտպանության դիրքերում՝ ոգևորված ֆաշիստական Գերմանիայի դեմ նրա մղած ազատագրական պատերազմի հաղթանակի հեռանկարով: Ահա, հենց այդ տարիներին՝ արտասահմանում սկսված հայրենադարձի շարժումը և հետագայում՝ Սովետական Կառավարության որոշմամբ իրականացած հայրենադարձությունն իր ուժգին արձագանքը դտավ մեր պոեզիայում: Պատմական այդ իրադրության արձագանքը կա նաև Առաջնորդին նվիրված բազմաթիվ բանաստեղծություններում: Իսկ հայրենադարձության թեման օրգանապես միանում է հայ ժողովրդի պատմական բախտի ընդհանուր թեմային:

Այդ պատմական նշանակալից փաստի առաջին արձագանքը՝ Ն. Զարյանի «Ազատության զորավարին» վերնագրով բանաստեղծությունն է՝ գրված 1943 թ. օգոստոսի 13-ին:

Հայրենական Մեծ պատերազմը այն ժամանակ դեռ բավական հեռու էր իր հաղթական ավարտից, բայց ստալինգրադյան մեծ ճակատամարտի հրացուլքով արդեն լուսավորվում էր հաղթանակի ուղին:

Պանդուխտ հայերի հայրենադարձի մասին դեռ խոսք չկար, բայց հենց այդ օրերին բանաստեղծն իր ժողովրդի տարաշխարհիկ հատվածների հայրենադարձն էր երգում՝ դիմելով «Ազատության զորավարին» — Մեծ Ստալինին:

Երեք քառյակի մեջ սեղմ, բայց ցայտուն պատկերներով գծված է հայ ժողովրդի պատմական բախտի ուղին, ազատ հայրենիքի, նրա մշտավառ երազանքը, որն իրականացել է Ստալինի շնորհիվ և ապա Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի մարտական մասնակցությունը, գալիք հաղթանակի հեռանկարը՝ ու սրա հետ կապված «մեր ցիր ու ցան եղբայրների» «վերադարձի հազարամյա հույսերը», որոնց իրականացումը նույնպես կապվում է Ստալինի անվան հետ:

«Դարերն իջան հայոց դլխին, ինչպես մկունդ ու կայծակ
Եվ արյունոտ մեր բեկորները նետվեցին ծագեծագ:
Քայլում էր հայն իբրև պանդուխտ անհարազատ ափերում,
Իր հանճարի ճրագն օտար հարկերի տակ էր վառում:
Նա հայրենիք էր երազում և դո՛ւ տվիր հայրենիք՝
Քո աչքի տակ լուսավորված ու ջերմացած քո սիրով:
Մեր ցիր ու ցան եղբայրների քարվանները թափառիկ
Քե՛ղ են նայում վերադարձի հազարամյա հույսերով:
Կախարդական մագնիսի պես դու հավաքում ես հիմի
Մեր բեռները համասփյուռ, իղձերը մեր դարավոր»:¹

Երիտասարդ բանաստեղծ Վահագն Դավթյանը ինքներգության ձևով («Իմ կյանքի լեզենդը») պատկերում է հայ ժողովրդի մի մեծ հատվածի անհայրենիք հալածական կյանքի ուղին, որի սկիզբը գալիս է հեռավոր «Եփրատի ափերից»: Այդ հատվածից եկած ամեն մեկի կյանքի ուղին է դա, որ մայր հայրենիք է վերադարձել օտար եզերքներից և այստեղ ազատ երկնքի տակ՝ «ժառանգել մի մեծ, մի հոյակապ երկիր, ապագայով՝ երգով ու արևով հարուստ»:

¹ Ն. Զարյան — «Շիկացած հոգով», էջ 89, 1943 թ. «Ազատության զորավարին»:

«Ինձ համար է նրա գարունը ծաղիկ,
Արևն ինձ համար է շողշողացել բարի,
Երկինքն իմ թռիչքին իր անհունն է բացել,
Իսկ Կրեմլում նստած իմաստունը դարի,
Համայն հողագնդի ընթացքի հետ անշեղ
Հարթել է և ընթացքն իմ մեծ ճանապարհի:
Այդ ճանապարհը ինձ միշտ վերև է տարել,
Դեպի կատարները լուսավոր ու անամպ...»¹

Ուշագրավ է, որ հայ բանաստեղծին հուզող նույն այդ զգացումն արտահայտում է նաև ռուս սովետական բանաստեղծը, խորապես համազգայնով տարաշխարհիկ պանդոկատ հայերի ապրած վիշտն ու նվիրական երազանքը: Մենք նկատի ունենք Մ. Մատուսովսկուն, որն իր ուղեգրական մի բանաստեղծության մեջ՝ («Օգոստոս») պատկերելով Սովետական Հայաստանի «լեռնաշխարհն այս գեղանի», — «հայոց արշալույսի բռնկումը անհուն» — գրում է.

«Եվ հասկացավ սիրտս՝ ինչու երկրագնդի ամեն մասում,
Պանդխտացած հայի հոգին միայն այս հողն է երազում,
Ինչու, ուր էլ նա թափառի, ուր էլ բախտը նետի նրան,
Կգա նորից իր հին բույնը վերագարձող հավքի նման»:²

Արտասահմանյան հայ պրոգրեսիվ և հայրենադարձ բանաստեղծների՝ Առաջնորդին նվիրված ստեղծագործություններից հիշատակության են արժանի՝ Վահան Դաքեայանի՝ «Առաջնորդին», Հովհ. Ղուկասյանի՝ «Երդում», Կ. Սիտալի՝ «Ողջուն սավառնակից» և «Հայ ժողովրդին», Անդրանիկ Թերզյանի՝ «Ես հասել եմ արդեն», Ստ. Ալաջաջյանի՝ «Արտասահմանի հայ բանվորներին», Հովհ. Աղապաշյանի՝ «Ստալին» և մի շարք այլ բանաստեղծների ոգեշունչ երգերը:

«Արտասահմանի հայ բանվորներին» վերնագրով հայրենաշունչ բանաստեղծության մեջ Ստ. Ալաջաջյանը հայրենադարձի

¹ «Սովետական գրականություն և արվեստ», 1949 թ., № 3, էջ 32, Վ. Դավթյան — «Իմ կյանքի լեզունդը»

² «Սովետական գրականություն և արվեստ», 1948 թ., № 11, էջ 109. Մատուսովսկու բանաստեղծությունը՝ Պ. Միքայելյանի թարգմանությամբ:

կոչ է անում կապիտալիստական աշխարհում տառապող պան-դուխտ հայ բանվորներին և փառաբանում է Սովետական Հայաստան հայրենիքը, որի «արևն է մեծ Առաջնորդը բարի, մեծ Առաջնորդը հանճար»:

«Եկե՛ք, եկե՛ք, հեռավոր իմ եղբայրներ հաբադատ,
Եկե՛ք շտապ, եկե՛ք աստղի պես պայծառ,
Ձի մեր հողն է մի երկինք, որի արևն է հպարտ,
Մեծ Առաջնորդը բարի, մեծ Առաջնորդը հանճար:
Եկեք, եղբայր բանվորներ, ես՝ մի բանվոր հայրենի,
Ձեզ եմ կանչում ձեր հողից, և՛ բոլորիդ, և՛ մեկին.
Եկեք կերտենք ձեռք-ձեռքի՝ սովետական աշխարհի
Ձեռքերուն հետ ժրաջան դալիքը մեծ աշխարհի»:¹

Ստալինի մեծությունն իբրև ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ու ողջ մարդկության ազատարարի, ինքնատիպ ու տա-դանդավոր կերպով պատկերում է Հովհ. Աղապաշյանը՝ 1945 թվին գրած իր «Ստալին» վերնագրով պարզ, անպաճույճ, բայց խորի-մաստ բանաստեղծության մեջ, որ կառուցված է ազատ շափով: Բանաստեղծությունն սկսվում է Սովետական Միության Հայրենա-կան պատերազմի հաղթական ավարտմանը հաջորդող սովետական ժողովրդի խաղաղ և ապահով կյանքի մի գեղեցիկ պատկերով: Իր խոսքն ուղղելով Ստալինին — բանաստեղծն ասում է.

«Գիտեմ թե հիմա,
Ուշ գիշերին Քրեմլի մեջ հեռակա
Ծխամորճդ հանդարտ կը մխա.
Եվ սիրտդ որպես լապտեր անմար,
Կախվեր է վրան Մոսկվայի:
Ռուսաստանը հողնած մարտերեն երեկի,
Ուշքը քեզ հանձնած անվրդով կաշխատե,
Մինչ Քրեմլի ժամացույցը հսկա,
Կարծես մի առ մի կը հաշվե
Ջարկերն անոր սրտին՝ հուժկու և ուժգին:
Դուն ուշադիր կհսկես
Երկրիդ հեքին և ժամանակի սահանքին»:²

¹ «Արտասահմանի հայ գրողներ», ժողովածու, 1946 թ., Հայտն հրատ., էջ 83:

² «Գրական թերթ», № 38, 1946 թ.:

Բանաստեղծության երկրորդ մասում պատկերված է Ստալինի և ժողովրդի փոխադարձ սերն ու նվիրվածությունը և Ստալինը, որպես մեր ժամանակի ու բոլոր դարերի մեծագույն մարդասեր, հումանիզմի բարձրագույն մարմնացում, որպես ժողովուրդների սրտագին բարեկամ ու առաջնորդ:

Բանաստեղծն ասում է.

«Դժվար է որոշել

Թե ով կսիրե ավելի,

Մարդի՞կը քեզ, թե՞ դուն զանգվածը մարդերուն...

Մանուկներն իսկ դեռաբարբառ

Երբ կժպտին պատկերիդ առաջ

Վանկին հետ առաջին, կը թոթովեն՝

Ստալին:

Ձեն կրցեր բոլոր մեծավորներն անցյալի

Ոչ իսկ իշխանավորները մեծահամբավ մեր դարուն,

Կապել իրենց այնքան սրտեր՝

Աշխարհներեն հեռավոր,

Ձի ոչ ոք քեզ պես սիրեց մարդն

Սիրով մ՝ անսահման

Եվ զայն դարձուց լույսն իր աչքին,

Դուն մին մի մարդու մեջ կաս,

Քո խոսքին մեջ ամեն մարդ կա,

Ահա թե ինչու երբ կխոսիս,

Իսկույն կը շարժի հեղեղատ մարդերուն

Եվ պատմությունն ընդոստ,

Կ'ոստնու քայլ մը դեպ առաջ»:

Բանաստեղծն այնուհետև հիշում է Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտումն, իբրև «ամբողջ աշխարհի դարափրկիչ հաղթանակ և իբրև «պատմության ընդոստ քայլ մը դեպ առաջ» մեծահանճար զորավար—Առաջնորդի շնորհիվ:

«Աշխարհն ամբողջ կարող էր կորել դարերով,

Եթե Մոսկվան երկնամուխ իր ավերով,

Ձի ճմլեր շանթերը Պեռլինի դժոխալուր,

Եվ մահն անպարտելի

Վոլգայի առաջ լքած իր լայն գերանդին
Զի դար խեղդվիլ օղակին մեջ Ստալինգրադի:
Դուն դարը փրկեցիր մարդակուլներեն այսահար,
Դարերը գալիք քեզ չեն մոռանար» —

ասում է բանաստեղծը հպարտության ու երախտագիտության զգացմունքով:

Ընկեր Ստալինի այդ համամարդկային մեծագործության արդյունքն է նաև հայ ժողովրդի փրկությունը խորտակումից ու հայրենազրկությունից, և նրա վերածնունդը ազատագրված «հայոց աշխարհում»:

«Իսկ վիրապն ընկած ժողովուրդը մեր հնամյա,
Որուն զավակները հանուն ճաճանչ մը լույսի
Դարեր անվերջ թիթեռներու պես
Երկրե երկիր ընկան, այրեցան,
Միշտ մնաց մոլար ու անօդնական
Մինչև որ ուրիշներու կարդին,
Անոր որդիներուն ալ տվիր թևեր անկեզ,
Եվ անոնք որպես արծիվներ խրոխտ
Խրեցան կողն երկնին
Վայր բերեցին արևն անմատույց
Եվ առատորեն զարյն վառեցին
Հայոց աշխարհի վրա լուսակարոտ»:

Բայց ոչ միայն հայրենադարձ բանաստեղծները: Պանդուխտ հայերի հայրենադարձի ուժեղ արձագանքը կա հետպատերազմյան շրջանի սովետահայ պոեզիայում ընդհանրապես, մեր գրեթե բոլոր բանաստեղծների ստեղծագործություններում կապված Մեծ Ստալինի անվան հետ: Վերհիշենք Հովհ. Շիրազի՝ «Մեծ Ստալինին» նշանավոր բանաստեղծությունը, ուր հեղինակն իր սրտագին խոսքն ուղղելով Առաջնորդին, ասում է.

«Դու հայրենիք տվիր հային նոր մարդկության օրրանում,
Դու չես թողնի մեր Արարատ լեռն էլ պանդուխտ մնա
հեռվում»:¹

¹ Հ. Շիրազ — Լիբիկա, էջ 20, 1946 թ., «Մեծ Ստալինին»:

Իր մի այլ՝ «Բաղձանք» վերնագրով բանաստեղծության մեջ Շիրազն ասում է.

«Ցրված պանդուխտ հայերիս
Բախտի դուռը դու բացիր»

Հայրենադարձ, հայրենակարոտ այն հայերի, որ՝

«Մտնելով Հայաստան, քո իմաստուն աչքերը մեր լույսերի
մեջ տեսան...»¹

Հայրենադարձ հայերի ցնծագին ձայնն է լսվում Սարմենի
«Երգ երջանկության» բանաստեղծության տողերից.

«Մենք երկրե երկիր, քաղաքե քաղաք
Թափառում էինք անտուն ու թշվառ.
Օտար աշխարհում, օտար երկնի տակ
Մեր կյանքը՝ գիշեր, մեր ճամբան՝ խավար:
Փա՛ռք նրան, որ մեզ հայրենիք տվեց
Օտար ափերից բերեց նոր աշխարհ,
Որ եղավ հայոց փրկարարը մեծ
Կենսատու արև մարդկության համար»:

Հայրենադարձ հայերի հույզերն է արտահայտում երիտասարդ
բանաստեղծ Արարատ Այվազյանը՝ իր «Երգ Առաջնորդին» լիրի-
կական ոտանավորում.

«Բազում դարեր մեր արցունքն ու արյունը
Հոսել է հորդ Արաքսի պես իմ հայոց,
Դու բացեցիր երջանկության դարունը
Հնամենի լեռնաշխարհում իմ հայոց:

Մոխիրներից ինչպես փյունիկ թռչունը
Հարյավ նորից հայրենիքը իմ հայոց.
Քեզնով միայն կանգուն մնաց իմ տունը,
Դու փրկեցիր անուշ երկիրն իմ հայոց:

¹ Հ. Շիրազ—Հատընտիր, էջ 157, «Բաղձանք», 1949 թ.:

Միտքդ խորն է հանց երկնքի անհունը,
 Հավերժ ես դու Մասիսի պես իմ հայոց,
 Դու քերում ես իրենց խաղաղ շեն տունը
 Պանդուխտ եղած զավակներին իմ հայոց»¹

Սովետահայ պոեզիայում ու ժողովրդական բանահյուսության մեջ ընկեր Ստալինին նվիրված բազմաթիվ այլ բանաստեղծություններ կան, որոնց մասին անհնար էր այստեղ անդրադառնալ: Բոլոր այդ բանաստեղծություններն էլ, ինչպես և մեր ամբողջ պոեզիան՝ համակված են անհուն սիրո ու նվիրվածության ոգով Մեծ Ստալինի նկատմամբ, նրա գլխավորած բոլշևիկների մեծագործ պարտիայի և Սոցիալիստական Հայրենիքի նկատմամբ:

Մեծ Առաջնորդի դյուցազնական կյանքի փառապանծ 70-ամյակը ստեղծագործական նոր հզոր մղում կտա բանաստեղծներին ու բոլոր արվեստների աշխատավորներին ստեղծելու նոր, է՛լ ավելի բարձրարվեստ մոնումենտալ երկեր, որոնք կպատկերեն մեր ժամանակի և բոլոր ժամանակների մեծագույն մարդու տիտանական կերպարը: Այդ երկերում գեղարվեստական ավելի խոր ընդհանրացումներով կգծագրվի ժողովուրդների հանճարեղ Առաջնորդի կերպարը, որի մեջ արտացոլվում է սովետական ժողովուրդների ու ողջ աշխատավոր մարդկության հաղթական առաջընթացը դեպի կոմունիզմ:



¹ «Գրական թերթ», № 10, 1947 թ.:

Խմբագիր՝ Է. ԹՈՓՉՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Կոնսուլտ. սրբագրիչ՝ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ


Պատվեր 581, տիրաժ 5000: Տպագր. 3 մամ.: Մեկ մամուլում 36.480
տպանիչ: ՎՁ 04984: Հանձնված է արտադրության 9/XII 1949 թ., ստորա-
գրված է տպելու 23/XII 1949 թ.:

Հայկական ՄՍՌ ԳԱ տպարան, Երևան, Արուսյան 124

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	տող	տալված է	պետք է լինի
21	վ. 1	աւուլուցոն	աւուլուցիոն
21	վ. 10	երկրն երբ	երկրն քն երբ
28	վ. 7	վաստահու թյունը	վաստահու թյունը
40	ն. 14	մին	ամին

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032142

[104]

9760 1 R.

A $\frac{1}{32142}$